ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

19/09/2024թ. ԿՆՔՎԱԾ N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (ԿՖԿՏՀ)» ՆԵՐԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան «05» 03 2025թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Եսայանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Պատվիրատու»), մի կողմից և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ի. Գևորգյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ «Կատարող»), մյուս կողմից (այսուհետև՝ «Կողմեր»), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածով և 19/09/2024թ. կնքված N ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր»), 7.5 և 7.15 կետերով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1. Հաստատել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված /2-րդ Առաջադրանքի մասով/ ծառայությունների մատուցման նպատակով ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը /կցվում է/:

1.2. Սահմանել, որ պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 03.01.2025թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև համաձայնագիր կնքելը կատարողի կողմից ծառայության մատուցման դիմաց վճարումը իրականացվում է այդ համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

1.3. Պայմանագրի 3.3-րդ կետով նախատեսված «Վճարման կառուցվածքը» կետը վերաշարադրել հետևյալ խմբագրությամբ .

«Առաջադրանք 1. Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 158 օր:

Առաջադրանք 2. Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 2.5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 115 օր:

Առաջադրանք 3. Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 7.5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 60 օր՝ Առաջադրանք 2-ի ավարտից հետո:

Առաջադրանք 4. Վճարումը առաքման ժամանակ՝ պայմանագրի ընդհանուր արժեքի 5%: Առաջադրանքի նախնական տևողությունը մինչև 110 օր՝ Առաջադրանք 3-ի ավարտից հետո:

Առաջադրանք 5. (Նախագծի կառավարում)՝ Առաջադրանք 5-ի ընդհանուր գումարը կկազմի պայմանագրի ընդհանուր արժեքի 60%: Այս առաջադրանքի տևողությունը գնահատվում է 24-36 ամիս, որը մեկնարկում է Մատակարարի պայմանագրով կողմերի իրավունքների և պարտավորությունների ծագելու օրվանից:

2. Այլ պայմաններ

2.1. 19/09/2024թ. կնքված N «ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3» ծածկագրով պետության կարիքների համար «Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ֆինանսների նախարարություն ք. Երևան, Մ. Ադամյան 1 ՀՎՀՀ՝ 02629081 Հ/Հ 900011054260 ՖՆ գործառնական վարչություն ՖՆ գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող _____ Ա. Եսայան (ստորագրություն) Կ.Տ.	«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 8-րդ հարկ ՀՎՀՀ՝ 02529689 Հ/Հ 1510000944344363 Արարատբանկ ԲԲԸ Տնօրեն՝ _____ Ի. Գևորգյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
19/09/2024թ. կնքված «ՀՀ ՖՆ ՀՄԱԾՁԲ-24/3» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«05» 03 2025թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության														
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			մարտ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը		
1	72261150/3	«Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգի (ԿՖԿՏՀ)» ներդրման ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայություններ			14,933,160	14,933,160	14,933,160	14,933,160	14,933,160	14,933,160	14,933,160	14,933,160	14,933,160	14,933,160

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011054260
ՖՆ գործառնական վարչություն
ՖՆ գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող

_____Ա. Եսայան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1, Էրեբունի
Պլազա բիզնես կենտրոն, 8-րդ հարկ
ՀՎՀՀ՝ 02529689
Հ/Հ 1510000944344363
Արարատբանկ ԲԲԸ
Տնօրեն՝

_____Ի. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ.